հաներ և աչուքն զամենայն բան տեսեր է, և նայ այլ այսպէս վկայութիւն երեսի, Տէր Սամվէլ եպիսկոպոս։ Եւ Հայոց ազգիս կրկին և երեքկին ուրախութիւն եղև. որպէս ասէ աստուածային գրեանքն, թէ Բ և Գ վկայիւք հաստատեսցի ամենայն բան։ Հայոց ազգն այլ այնպէս հաստատուն և անշարժ եղօ ի վերայ հաւատոց։

Եւ յառաջմէ ի ձեզ մէկ այսպէս մօհրով թուխթ մի գրկեցաք, վասն զատկին համար. և յետոյ որ այս Տէր Սամվէլ եպիսկոպոսն եկաւ՝ որ զլոյսն ինքն իւր ձեռաքն էր հաներ և զամենայն բան աչուքն էր տեսեր, և վկայեց, և այսպէս կրկին ձեզ այլ իմացուցաք որ պինտ ըստուգ է, հաւատայք եւ Սուրբ Լուսաւորչին փառաքն փառք տայք Աստուծոյ, և ուրախացիք հոգով և մարմնով, որ Հայոց ազգն պարզերես եղաւ ԺԱ ազգին ի մէջն։ Բավ (բաւ) է։

Եւ ի հին և ի նոր գրեանքն շատ բան գտաք վասն Ծառազատկին համար. դուք այլ իմացիք։ Ի թվին Հայոց ՈՒԶ (1197) խանկարեցին զզատիկն և ընդ աստուածասպանսն արարին այլազգիքն. 'ի գլուխ կատարման սուրբ յարութեան աւուրց՝ բերին եղբարց մերոց զաւետիս լուցման կանթեղի գերեզմանին ի մեր զատկին, և յամօթ եղեն հակառակքն որպէս և այժմոյս որ յամօթ եղեն Հոռմերն. այլ բաւէ։ Եւ ի մէկ գիրք մն այլ այսպէս գրած էր. Սրբոյն Գրիգորի վերագետոցի Հայոց Վկայասիրի՝ բան յորդորական, վասն մոլորման զատկին. Ի թվականութեան Հայոց ՇԼԱ, (1081–2) ի սուրբ զատկէն մոլորեցան ԺԱ ազգ հաւատացելոց, և Հայք և Ասորիք միայն մնացին հաստատուն, և Հոռոմք և Ֆռանկք հետևեցան Իռիոնի, որ արկանէր զտումարն յապրիլի Ե, և զլրումն լուսնին հանդիպեցուցանէր ի տօնն Ղազարու. զոր Հայք և Ասորիք և Երբայեցիք արկանէին ապրիլի Զ, որ հանդիպեցուցանէր ի տօն Ծառազարդարին. յորժամ ժողով արարին զԻռիոն ոչ կոչեցին. և նայ նախանձեալ և եկեալ գաղտ առեալ զգիրն, և քերեաց և արար զվեցն հինգ. վասն որոյ յամէն Ղե (95) ամի մոլորին ցոյնք ի զատկին։ Ցայնժամ դասք քահանայիցն որ էին ի քաղաքն յՈւրհայ, ազգ արարին Տեառն Գրիգորիսսի Վկայասիրի Հայոց կաթողիկոսի. և նայ գրով ձեռին իւրոյ հաստատեաց զնոսա անշարժ կեալ ի հաւատս ուղղափառութեան։ Եւ էր պատճէն գրոյն այսպէս, զոր գրեաց Ուրհայ. «Քրիստոսի ճըշմարիտ սիրողացդ և դաւանողացդ Սրբոյ Երրորդութեան, քահանայիցդ և իշխանացդ և այլ ամենայն հաւատացեալ ժողովրդոցդ, ողջոյն։ Զաստուածասիրութեան զգիրս ձեր ընթերցաք և զկնդիրս ձեր լուաք վասն ստուգութեան սուրբ զատկին, և յոյժ գոհութիւն մատուցաք Աստուծոյ՝ որ շարժեաց զձեզ յայդ։ Եւ արդ, Տէր Յիսուս Քրիստոս զաւրացուսցէ զձեզ ի նոյն կեալ հաստատուն և տալ պատասխանի ընդդիմողաց։ Գիտէ ինքն ամենագէտն ողորմութեամբն իւրով և ամենաքննին զօրութեամբն իւրով, որ թէպէտ և գործովք միշտ մեղանչեմք Աստուծոյ, այլ հաւատով ես և հաւատքս (հաւատքս) իմ ամենեքեան զուղիղն և զճշմարիտն ունիմք։ Եւ եթէ ի վերայ ճշմարտութեան՝ պատժոց հանդիպիմք, մի՛ զանգիտէք և մի՛ երկնչիք. զի վարձս ի Տեառ-